ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Ռուսաստան՝ տարեկան 5 րուբլի
» կէս տարին 3 »
Արտասահման՝ տար. 18 ֆրանկ
» կէս տ. 10 »
Ամերիկա՝ տարեկան 3 տոլար
» կէս տ. 2 »

ՀԱՏԸ 6 ԿՈՊԷԿ

# ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ընդունւում են բոլոր լեզուներով
Առաջին էջ. տողը 20 կոպէկ
Վերջին » » 10 »

Խմբագրատունը բաց է ամէն օր ժամը 9—1, բացի կիրակի և տօն օրերից

Հասցէ՝
Эривань,
Редакція „АШХАТАНКЪ“

Ա. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ, 28 ՄԱՅԻՍԻ 1916 Թ. — № 8

Հայ կամաւորական I, II, III, IV, V, VII և պահեստի գունդերը խորին կսկիծով յայտնում են

IV ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

## ՔԵՌԻ-Ի

հերոսական մահը, որ տեղի ունեցաւ Ռէվանդուզի ճակատամարտում։

Հոգեհանգիստը տեղի կ'ունենայ մայիսի 29-ին, կիրակի ժամի 12-ին, Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում։

(15) 1—1

Հայկ. կամաւորական IV գումարտակի լիազօր Արմենակ Թադևոսեան և ընկերները խորին ցաւով յայտնում են

IV ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

## ՔԵՌԻ-Ի

փառաւոր մահը, Ռէվանդուզի ճակատամարտում։

Հոգեհանգիստը տեղի կ'ունենայ կիրակի, ժամի 12-ին, Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում։

(13) 1—1

Հայ կամաւորների կարգադիր մարմնի Երևանի ճիւղը խոր կսկիծով յայտնում է

IV ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

## ՔԵՌԻ-Ի

անփոխարինելի մահը, Ռէվանդուզի ճակատամարտում։

Հոգեհանգիստը տեղի կ'ունենայ մայիսի 29-ին, կիրակի ժամի 12-ին, Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում։

(16) 1—1

Վասպուրականի գաղափարակից ընկերները ցաւի կսկիծով կը յայտնեն

Հայ ազատագրութեան մեծագոյն ռազմիկներէն

## ՔԵՌԻ-Ի

հերոսական մահը, որ տեղի ունեցաւ Ռէվանդուզի արիւնահեղ ճակատամարտին մէջ։

(17) 1—1

Երևանի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը, Հայկական Կոմիտէն, հայ կամաւորներին օգնող Հայ Կանանց Կոմիտէն և Հայկական Հիւանդանոցի Վարչութիւնը խորին ցաւով յայտնում են

Հայ կամաւորական IV գումարտակի հրամանատար

## ՔԵՌԻ-Ի

հերոսական մահը, Ռէվանդուզի ճակատամարտում։ Կիրակի, մայիսի 29-ին, քաղաքիս Ս. Պօղոս Պետրոս եկեղեցում կատարուելու է հոգեհանգիստը։

(18) 1—1

## ՔԵՌԻԻ ՄԱՀԸ

Ռէվանդուզի մօտ, մայիս 13, 14 և 15-ին տեղի կ'ունենային կատաղի կռիւներ։ 15-ին Քեռին իր բանակով առաջացած էր, կռիւը կատաղի էր։ Թուրքերը կը մտնեն Քեռիի թիկունքը, հին փէղոյին բանակը կը բաժնէ երեք մասի. հարիւրակ մը կը ճամբէ թիկունքը պահելու, ինքն անձամբ կը վերցնէ երկու հարիւրակ և գրոհի կը դիմէ։ Այդ միջոցին գնդակը կ'անցնի Քեռիի ճակատէն քիչ վեր ու իսկոյն կ'անշնչացնէ զինք։ Քեռիի հետ միասին կը սպաննուի իր թիկնապաններէն մէկը և կը վիրաւորուի ուրիշ մը։ Մերոնք կը յաջողին գրաւել թշնամու դիրքերը, բայց առանց Քեռիի։

## ՌԱԶՄԻԿԻ ՄԱՀԸ

Բօթաբեր հեռագիրը գուժեց մեր մեծագոյն ռազմիկներէն մէկի—հայ հրամանատար ՔԵՌԻԻ մահը։

Հայ ժողովուրդը իր լինել չլինելու բողէին, կորսնցուց մարտական ուժերէն մէկը, որ հիմնաքարն էր իր ռազմական կարողութեան։

Անոր կորուստը շանթահարեց ամէն մէկ հայ սիրտ ու բարացուց արցունքը ամէն աչքերուն։

Ռազմական սիւները կ'անհետին հետզհետէ, Հայ ժողովուրդը իր կենսական երակն է որ կը զոհաբերէ քաղաքակրթութեան մեծ դատին, և պիտի շարունակէ զոհաբերել, մինչև որ բարբարոս թշնամին իյնայ գահավիժօրէն, մինչև որ իր թանկ զոհերու արիւնը բերէ իրեն վերջապէս ապահով Ազատութիւնը։

digitised by A.R.A.R.@

